ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 35

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջների՝ *ավագանին որոշում է.*

*Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 9 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝*

1. Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 55-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:
3. Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին:

*Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՃՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 36-Ն

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասն» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջների՝ *ավագանին որոշում է.*

1. Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի «Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 55-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հավելվածի հատված 1-ի 1111 տողի «Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքեր շինությունների համար» «Ընդամենը» 4-րդ սյունակի «8500.0» թիվը փոխարինել «10100.0» թվով և «Վարչական մաս» 5-րդ սյունակի «8500.0» թիվը փոխարինել «10100.0» թվով:

2) Հավելվածի հատված 1-ի 1261 տողի «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» «Ընդամենը» 4-րդ սյունակի «7734.5» թիվը փոխարինել «9586.9» թվով և «Ֆոնդային մաս» 6-րդ սյունակի «7734.5» թիվը փոխարինել «9586.9» թվով:

3) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» 4112 Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «4100.0» թիվը փոխարինել «5700.0» թվով և «Վարչական բյուջե» 7-րդ սյունակի «4100.0» թիվը փոխարինել «5700.0» թվով:

4) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» 4235 Կառավարչական ծառայություններ հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «860.0» թիվը փոխարինել «300.0» թվով և «Վարչական բյուջե» 7-րդ սյունակի «860.0» թիվը փոխարինել «300.0» թվով:

5) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» 4234 տեղեկատվական ծառայություններ հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «100.0» թիվը փոխարինել «150.0» թվով և «Վարչական բյուջե» 7-րդ սյունակի «100.0» թիվը փոխարինել «150.0» թվով:
6) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» 4264 տրանսպորտային նյութեր հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «1134.1» թիվը փոխարինել «1329.1» թվով և «Վարչական բյուջե» 7-րդ սյունակի «1134.1» թիվը փոխարինել «1329.1» թվով:
7) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» 4215 ապահովագրական ծախսեր հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «150.0» թիվը փոխարինել «105.0» թվով և «Վարչական բյուջե» 7-րդ սյունակի «150.0» թիվը փոխարինել «105.0» թվով:

8) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» 4241 մասնագիտական ծառայություններ հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «980.0» թիվը փոխարինել «1340.0» թվով և «Վարչական բյուջե» 7-րդ սյունակի «980.0» թիվը փոխարինել «1340.0» թվով:
9) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2451 տողի 04 բաժին 5 խումբ 1 դաս «Ճանապարհային տրանսպորտ» 5113 շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «6161.0» թիվը փոխարինել «8013.4» թվով և «Ֆոնդային բյուջե» 8-րդ սյունակի «6161.0» թիվը փոխարինել «8013.4» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻՋԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՃՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 37

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *ավագանին որոշում է.*

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 3.98516 հա այլ հողատեսքը 3 լոտով օտարել աճուրդ վաճառքով և մեկնարկային գինը հաստատել հողամասերի կադաստրային արժեքի 100% և ավել չափով՝

1) լոտ 1 կոդ 07-054-0332-0023; 0.34083 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը 80000 ՀՀ դրամ:

2) լոտ 2 կոդ 07-054-0332-0030; 1.11817 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը 150000 ՀՀ դրամ:

3) լոտ 3 կոդ 07-054-0332-0033; 2.52616 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը 250000 ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻՋԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՃՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 38

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները՝ *ավագանին որոշում է.*

1. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Քրիստինե Վազգենի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0318-0068 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 22072020-07-0133) 2.483333 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսություն (սանհանգույց, ջրանոց, ծածկարան) կառուցելու համար:
2. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Արտյոմ Կարենի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0302-0039 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 11062021-07-0127) 0.067 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսություն (ջրանոց, պարիսպ և օժանդակ շինություններ) կառուցելու համար:
3. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Արսեն Կարենի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0302-0038 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 11062021-07-0124) 0.07866 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսություն (ջրանոց, պարիսպ և օժանդակ շինություններ) կառուցելու համար:
4. Նշված փոփոխությունները ներառել համայնքի հողերի ընթացիկ տարվա հաշվեկշռում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ